**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌԻ ՄԱՐԶ**
**ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

---

ՀՀ Լոռու մարզի Գուգարք գյուղ, Հեռ. 0322-3-93-30,

N 135
*14 հունիս 2019թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**Ա. ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Ղուկասյան.

Ներկայացնում ենք Գուգարք համայնքի ղեկավարի 2019 թվականի 83-87 որոշումները:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Աշոտ Աշուղյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

3 06 2019թ.

# ՈՐՈՇՈՒՄ No - 83

06-031-0019-0002 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Հիմք ընդունելով քաղաքացի Ելենա Վարդանյանի դիմումը, հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 21.11.1991թ. թիվ 11 որոշումը, Ա/Ձ Գ. Վեքիլյանի կողմից կազմված հատակագիծը, Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510 Ն օրենքի 7-րդ հոդվածի 1 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005 N 2387 Ն որոշումով, ըստ օրենքի ժառանգության իրավունքի 20.05.2019թ. տրված 1930 վկայագրի՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Վերականգնել և օրենքի ուժով ճանաչել 06-031-0019-0002 ծածկագրի տակ գտնվող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0545հա հողամասի նկատմամբ Ելենա Միխայլովնա Վարդանյանի (ծնվ. 05.11.1952թ.) սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքի ճանաչումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներ չի կատարվում, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չի առաջացնում, անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:
3. Հողամասի սահմանները որոշվում են որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4. Անշարժ գույքի փոստային հասցեն է՝

գ. Գուգարք Քոթեջային 5 փողոց 5 հողամաս

5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

Գուգարքի համայնքապետ՝ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

07300689

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

04 06 2019թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 84

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0001-0002-018 ԾԱԾԿԱԳՐԻ, ՕԼԳԱ ԶԱՎԵՆԻ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ (ՀԱՄԱՁԱՅՆ 30.05.2019Թ. ՏՐՎԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ N 30052019-06-0067 ՎԿԱՅԱԿԱՆԻ) ԲՆԱԿԱՐԱՆԻ ՃՇՏՎԱԾ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0001-0002-018 ծածկագրի, Օլգա Զավենի Առուստամյանին պատկանող բնակարանի համար հաստատել հետևյալ ճշտված փոստային հասցեն՝
գ. Գուգարք Էներգետիկների 5-րդ փողոց 8 շենք 18 բնակարան

Գուգարքի համայնքապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

# Ո Ր Ո Շ Ու Մ N 85

**06 հունիսի 2019**

ՍՈՑՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի N 48 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը՝*

Գուգարքի ներքոհիշյալ բնակիչներին տալ դրամական օգնություն.

1. Անիկ Սոլոմոնյան- 70000դր.
2. Մացակ Պողոսյան – 60000դր.
3. Ռուզաննա Ներկարարյան – 40000դր.
4. Ասիկ Օզանյան – 35000դր.:

ԳՈՒԳԱՐՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ԱՃՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

07.06. 2019թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 86

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061- ԾԱԾԿԱԳՐԻՑ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ (ՀԱՄԱՁԱՅՆ ՀԱՏԱԿԱԳԾԻ) 0.0612հա ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՅԼ ՀՈՂԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 53 հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387 Ն որոշմով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 31.10.2018թ. թիվ 101/111.3/722-18 գրությունը,*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

1. Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061- ծածկագրից առանձնացված 0.0612հա մակերեսով բնակավայրերի այլ գործառնական նշանակության գործառնական նշանակությունը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության:
2. Նշված հողամասի նկատմամբ ճանաչել Գուգարք համայնքի սեփականության իրավունքը:
3. Միջնորդել անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանման ղեկավարությանը կատարելու Գուգարք համայնքի սեփականության իրավունքի գրանցում:
4. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝

գ. Գուգարք 1 փողոց 39 հողամաս

Գուգարքի համայնքապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԳՈՒԳԱՐՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԻ

07 06 2019թ.

# ՈՐՈՇՈՒՄ No 87

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՈՒԳԱՐՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-031-0061-0107 ԾԱԾԿԱԳՐԻ, ԱՐՇԱԿ ՄԱԹԵՎՈՍԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 հոդվածի 1-ին մասի 22 կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. N 2387Ն որոշմամբ՝*

## ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԸ ՈՐՈՇԵՑ.

Գուգարքի կադաստրային քարտեզի 06-031-0061-0107 ծածկագրի, Արշակ Մաթևոսի Կիրակոսյանի ընտանիքին պատկանող բնակելի տան համար հաստատել հետևյալ փոստային հասցեն՝
գ. Գուգարք 2 փողոց տուն 38

Գուգարքի համայնքապետ Ա. ԱՇՈՒՂՅԱՆ